ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2020թ. թիվ 503-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող Լ.Վարդանյանի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից Լ.Վարդանյանին հատկացնել 20000 /քսան հազար/ դրամ՝ Պրիվոլնոյե և Մեծավան գյուղերի բնակիչներին օգնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հուլիսի 6
ք.Վանաձոր

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա.Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

Մեծավան գյուղի բնակիչ Նաիրուհի Հարությունյանի և Պրիվոլնոյե գյուղի բնակիչ Ալիկ Պալաքյանի մոտ հայտնաբերվել է «Lues» հիվանդություն: ՀՀ Լոռու մարզպետին է դիմել «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենը այն մասին, որ վերջիններս պետք է բուժվեն ՀՀ ԱՆ մաշկաբանության և սեռավարակների բժշկագիտական կենտրոնում, սակայն գտնվում են սոցիալապես խիստ անապահով պայմաններում և հնարավորություն չունեն անգամ հոգալու մինչև Երևան ճանապարհածախսը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը վերոնշյալ ծախսերը փոխհատուցելու համար տրամադրել 20.000 դրամ:
Առդիր 1 էլ. ֆայլ:

Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության պետի ժ/պ Լ.Վարդանյան